



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, Էլ. փոստ kotayk@mta.gov.am

N _____

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶ ԱՄԱՆՈՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Միրելի՛ կոտայքցիներ, սիրելի՛ քաղաքացիներ,

10 նոր մանկապարտեզների կառուցում, վերակառուցում եւ հիմնանորոգում, 5 մշակույթի տների հիմնանորոգում, 3 արվեստի դպրոցների կապիտալ նորոգում, 15-ից ավելի համայնքներում ներհամայնքային ճանապարհների բարեկարգում եւ ասֆալտապատում, բազմաթիվ դպրոցների մարզադահլիճների ու ճաշարահների վերանորոգում, շուրջ մեկ տասնյակ դպրոցներում ջեռուցման լոկալ համակարգերի կառուցում, 5-ից ավելի համայնքներում խմելու և ոռոգման ջրի համակարգերի հիմնանորոգում և կառուցում, լուսավորության համակարգերի անցկացում, մի շարք համայնքների եւ ամբողջական թաղամասերի գազիֆիկացում, մարզային ենթակայության հաստատություններում եւ համայնքներում սեփական խնայողություններով սոցիալական եւ տնտեսական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված բազմաթիվ ծրագրերի կյանքի կոչում.

ահա այսպիսին էր 2019 թվականը Կոտայքի մարզում:

Մենք ամեն ինչ արեցինք՝ մեկ աստիճանով եւս բարձրացնելու մեր քաղաքացիների կյանքի որակն, ու շնորհիվ մեր քաղաքացիների հետ պարբերական հանդիպումների ու համայնքներում իրականացվող աշխատանքային այցերի ու ներառական քննարկումների, մեկ քայլով ավելի մոտեցանք մեր հոչակած՝ «բնակչի վերափոխումը ՀՀ քաղաքացու» տեսլականի ի կատար ածմանը:

Մենք նոր՝ 2020 թվական ենք մուտք գործում՝ մեր ձեռքին ունենալով հստակ ճանապարհային քարտեզ, որը մեզ առաջնորդելու է դեպի նոր հաղթանակներ ու ավելի մասշտաբային նվաճումներ:

2020 թվականն անկասկած լինելու է ավելի լայնածավալ ծրագրերի ու հանրօգուտ նախաձեռնությունների իրականացման տարի:

Միրելի՛ քաղաքացի, շնորհավորում եմ Նոր Տարիդ ու մաղթում փոփոխությունների եւ վերափոխման ճանապարհին անկոտրում կամք, ուժ ու կորով, անսահման լավատեսություն ու խորքային փոփոխություններին հասնելու անսահման վճռականություն. հավատա՛ , որ այլևս դու մեր պետության զարգացման ու պետականության կայացման գործընթացի կարևորագույն մասնիկն ես:

Շնորհավո՛ր Ամանոր, Հայաստա՛ն,

Շնորհավո՛ր Ամանոր, Կոտա՛յք: